


Ճ Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱԿԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՀՄ 2010 թ. թիվ 11

Սոցիալական երկխոսությունը և արհմիությունները ձգնաժամի պայմաններում

Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի կողմից նոյեմբերի 26-27-ը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայում կազմակերպվեց կլոր սեղան, «Սոցիալական երկխոսությունը և արհմիությունները ձգնաժամի պայմաններում» թեմայով:

Քննարկմանը մասնակցում էին Գրիգոր Գրադևը՝ Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի պատասխանատու քարտուղար, Անտոն Լեպպիկը՝ Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի խորհրդատու, Նադինե Թևենթը՝ Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի մարդու և արհմիությունների իրավունքների բաժնի հետազոտությունների և քարոզչությունների մասնագետ, ինչպես նաև ՀԱՄԿ-ի անդամ ճյուղային հանրապետական միությունների նախագահներ, ՀԱՄԿ-ի աշխատակազմի բաժնիների վարիչներ:

ՀԱՄԿ-ի նախագահ Էդուարդ Թումայանը, բացելով կլոր սեղանի աշխատանքները, շնորհակալություն հայտնեց հյուրերին այցելության և աշխատանքային փորձի փոխանակման պատրաստակամության համար, հատկապես ձգնաժամի պայմաններում և մաղթեց հաջողություններ քննարկվող հարցերի երկօրյա աշխատանքներում:

Այնուհետև Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի Համաեվրոպական տարածաշրջանային խորհրդի պատասխանատու քարտուղար Գ. Գրադևը շնորհավորեց Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիային արհմիությունների ընտանիքում անդամագրվելու համար և մաղթեց հաջողություններ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիային համատեղ աշխատանքում:

-Ես պետք է նշեմ այն դժվարին և ծավալուն գործընթացը, որ անցան Հայաստանի արհմիությունները այդ անդամակցության ճանապարհին: Արհմիությունների միջազգային կազմակերպության քարտուղարության

առաքելության կողմից ուսումնասիրվեց արհմիությունների իրավիճակը երկրում արհմիութենական բոլոր մակարդակներում ԱՄԿ-ին անդամակցության չափանիշների տեսանկյունից: Ուսումնասիրությունների ամփոփման արդյունքում առաքելությունը նշեց, որ 2007թ. ՀԱՄԿ-ի համագումարը ընտրել է բարեփոխումների գործընթաց և նորընտիր ղեկավարությունը մտադրված է զարգացնել անկախությունը և ժողովրդավարությունը: Միաժամանակ բարձր գնահատեց ՀԱՄԿ-ի բաց, թափանցիկ և շատ կառուցողական մոտեցումը տարբեր քննարկումներին: Պետք է նշեմ նաև, որ ԱՄԿ-ի անդամակցության համար դիմել էին նախկին ՍՍՀՄ-ի կազմում գտնվող հանրապետությունների արհմիություններ, սակայն ուսումնասիրությունների արդյունքում առաջիմ հաստատվել է Հայաստանի դիմումը, որպես ԱՄԿ-ի ասոցիացված անդամի: Մեր աջակցությունն ու պատրաստակամությունն ենք հայտնում ՀԱՄԿ-ի խնդիրների լուծմանն օգնելու համար:

Այնուհետև նա մանրամասնորեն ներկայացրեց «Տնտեսական ձգնաժամը և սոցիալական երկխոսության դերը» թեման, որը շատ արդիական էր, այդ իսկ պատճառով քննարկումը կայացավ շատ բուռն պայմաններում: Սոցիալական գործընկերությունը դեռևս մեր հանրապետությունում կայացած նորմ չէ, որը արհմիությունների համար ստեղծում է բազմաթիվ խոչընդոտներ, այդ էր պատճառը, որ կլոր սեղանի մասնակիցները ակտիվորեն քննարկում էին այլ տարածաշրջանների փորձը:

Այնուհետև ներկայացվեց Միջազգային և Եվրոպական արհմիութենական շարժումը, կառուցվածքները, գործառույթները և մարմինները:

Երեկոյան նիստին ներկայացվեց «Տարածաշրջանի քաղաքական համատեքստը՝ Եվրոպայի խորհուրդ, Եվրոպական միություն, Եվրոպական գործընկերության քաղաքականություն, Եվրոպական սոցիալական երկխոսություն» թեման:

Հաջորդ օրը քննարկվեց «Աշխատանքային նորմեր, արհմիությունների իրավունքները և նրանց պաշտպանելու մեխանիզմները՝ ԱՄԿ, Եվրոպական սոցիալական խարտիա, Եվրոպական միության դերը» թեման: Ամփոփմանը քննարկվեց և սահմանվեց Համա-եվրոպական տարածաշրջանային խորհրդի և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի համագործակցության առաջնահերթությունները:

Պետք է նշել, որ նման հարցերի քննարկումների պահանջը զգալի էր և կլոր սեղանի մասնակիցները առաջարկեցին, որ սեմինարներ, կլոր սեղաններ այս մակարդակի արհմիութենական աշխատողների համար հաճախակի կազմակերպվեն, չնայած նրան, որ արհմիութենական կազմակերպությունների նախագահների սեմինարների կազմակերպումը արդեն լայն թափ է ստացել:

«Ձորավիզ» թերթ 04.12.2009թ. թիվ 23 (134)

ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում

Հունվարի 19-ին Հակոբ Հակոբյանի նախագահությամբ տեղի ունեցավ ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստ՝ օրակարգում ունենալով կառավարության հեղինակած «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նիստին մասնակցում էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի գործատուների հանրապետական միության և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչներ:

Գործադիրը նպատակ ունի հստակեցնել աշխատանքային հարաբերությունների ծագման, կարգավորման մեխանիզմները և դրանք համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրությամբ ու ԱՄԿ-ի կոնվենցիաներով և Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով ամրագրված դրույթների պահանջներին: Կառավարությունն առաջարկում է գործատուի և աշխատողի միջև կնքել բանավոր և գրավոր աշխատաքային պայմանագրեր. բանավոր պայմանագիրը նպատակ ունի նվազեցնել աշխատանքի ընդունելու ժամանակ տարվող փաստաթղթային ձևակերպումները՝ սահմանելով, որ աշխատանքային պայմանագիրը կնքվում է բանավոր, եթե այն բովանդակում է միայն աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն պայմանները, բացառությամբ աշխատավարձի չափի, հակառակ դեպքում՝

պայմանագիրը կնքվում է գրավոր: Նվազեցվել է արտաժամյա և զիջերային աշխատանքի վարձատրության չափը՝ գործող օրենսգրքով սահմանված ժամային դրույքաչափի մեկ ու կես անգամից ոչ պակասի փոխարեն սահմանելով առաջին դեպքում 50 տոկոս, երկրորդ դեպքում 30 տոկոս հավելում: Հստակ սահմանվում են աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում վճարվող արձակման նպաստի չափերը՝ կախված տվյալ գործատուի մոտ աշխատողի անընդմեջ աշխատանքային ստաժից. որքան շատ է աշխատանքային ստաժը, այնքան մեծ է վճարվող գումարը:

Քննարկումների արդյունքում Հայաստանի գործատուների հանրապետական միության և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչները ընդունելի համարեցին կառավարության որոշ առաջարկներ, իսկ վիճահարույց հարցերը որոշվեց քննարկել և ներկայացնել փոխհամաձայնեցված տարբերակ:

Նիստի ավարտին ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հակոբ Հակոբյանը, կարևորելով շահագրգիռ քննարկումները, առաջարկեց օրինագծի վերաբերյալ առաջարկները գրավոր ներկայացնել հանձնաժողովին:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2009 թվականին Հայաստանի պետիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունը միավորում էր 16745 արհմիության անդամ, որից 7527-ը կին են:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի հոկտեմբերին ՃՀՄ-ի կողմից ուսումնասիրվեցին Գավառի տարածքի Գեղարքունիք, Լանջաղբյուր, Ծաղկաշեն, Լճափ համայնքների և Կապանի տարածքի Վարդավանք համայնքի ու դպրոցի արհմիության անդամների աշխատանքային պայմանները: Ուսումնասիրման արդյունքների մասին տեղեկանքը քննարկելուց հետո ՃՀՄ նախագահությունը դիմեց ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Գավառի տարածքի Գեղարքունիք, Լանջաղբյուր, Ծաղկաշեն, Լճափ համայնքների մշակույթի տների հիմնանորոգման, Գավառի տարածքի Գեղարքունիք և Լճափ համայնքների գյուղամիջյան ճանապարհների կառուցման, Կապանի տարածքի Վարդավանք համայնքի համայնքային կենտրոնի և դպրոցի, ինչպես նաև Սյունիք-Վարդավանք ճանապարհի հիմնանորոգման հարցերում աջակցելու խնդրանքով: Ստորև ներկայացնում ենք պետական կառավարման մարմիններից ՃՀՄ նախագահին ուղղված նամակները:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունից՝

Հարգելի տիկին Հակոբովա

Ի պատասխան Ձեր 2009 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 99-01 գրության հայտնում ենք, որ արհմիության անդամների աշխատանքային պայմանների բարելավման խնդիրն անմիջականորեն կապված է աշխատավայրերի բարվոք վիճակի հետ:

Ձեր կողմից ներկայացված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածքի Գեղարքունիք, Լանջաղբյուր, Ծաղկաշեն, Լճափ համայնքների մշակութային տների և ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանքի համայնքային կենտրոնի ու դպրոցի աշխատավայրերի բարվոք վիճակի բարելավման համար անհրաժեշտ է նշված օբյեկտներում իրականացնել հիմնանորոգում, որի իրականացման խնդիրն կարելի է անդրադառնալ դրական փորձաքննություն անցած նախագծանախահաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում, օրենքով սահմանված կարգով ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Սյունիքի մարզպետարանների կողմից ներկայացված հայտի առկայության պայմաններում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք ու Լճափ համայնքների գյուղամիջյան ճանապարհների կառուցման և ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք-Վարդավանք համայնքների մարզային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների իրականացումը ևս խթան կհանդիսանա բնակչության կենսապայմանների բարելավման, ինչպես նաև արտագաղթի կանխման համար:

Հարգանքով՝

Շինարարության քաղաքականության վարչության պետ՝ Գ.Քամայան

ՀՀ Սյունիքի մարզպետից՝

Հարգելի տիկին Հակոբովա

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 27.11.2009թ. N01/16/6776-09 հանձնարարությամբ մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրվել է Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից ՀՀ Սյունիքի մարզի Վարդավանք համայնքում կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկանքը: Այդ կապակցությամբ հայտնվում է հետևյալը.

“Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին” ՀՀ օրենքում 2006 թվականի հունիսի 13-ին կատարված փոփոխության արդյունքում ՀՀ Սյունիքի մարզի վերին Գյոդաքլու համայնքը վերանվանվել է Վարդավանք, սակայն բնակավայրի մոտ տեղադրված է “Գետիկ” անվանմամբ, բնակավայրի անվանման հետ որևէ առնչություն չունեցող ճանապարհային նշանը: Այն փոխելու և օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար առաջարկություն է ներկայացվել ճանապարհը ապասարկող “Կապանի ՃՇՇ” ՍՊԸ-ի տնօրենին:

Վարդավանք համայնքում չկա գյուղապետարանի վարչական շենք: Համայնքի ղեկավարի աշխատակազմը գործում է համայնքային ենթակայության ակումբի շենքում, որը ենթակա է հիմնանորոգման: Գյուղապետարանի և համայնքային մյուս ծառայությունների գործունեության համար համապատասխան պայմանների ապահովելու համար անհրաժեշտ է ձեռք բերել նոր շենք: Այն նախատեսված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2009-2013 թվականների քառամյա ծրագրով և կիրառործվի համապատասխան միջոցների առկայության դեպքում:

Վարդավանք տանող 7 կմ երկարությամբ ճանապարհի վերաբերյալ տեղեկացվում է, որ համայնքի ղեկավարի միջոցով այն մասնակի վերանորոգվել է և գտնվում է տրանսպորտային երթևեկության համար բավարար վիճակում:

Հիմնանորոգման ենթակա մարզային ենթակայության Վարդավանք-Խղրանց ճանապարհահատվածը, որը իրականացնելու համար “Կապանի ՃՇՇ” ՄՊԸ-ի կողմից համապատասխան միջոցներ կձեռնարկվեն 2010 թվականին:

Բնչ վերաբերում է Վարդավանքի դպրոցի խնդիրներին, ապա դրանք լուծելու համար դպրոցի տնօրենին տրվել է համապատասխան հանձնարարականներ և դրանց կատարումը վերցվել է հսկողության: Մանկավարժական համակազմի 7 անդամներից երթևեկող ուսուցիչներ են համարվում 3-ը, որոնց ամենամսյա երթևեկելի օրերի թիվը կազմում է 17-ական օր, որի համար նրանք օրենքով սահմանված կարգով ստանում են փոխադրավարձ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մարզի համայնքների, այդ թվում Վարդավանք համայնքի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրները ներառվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում և համապատասխան միջոցներ կձեռնարկվեն դրանք լուծելու ուղղությամբ:

Մարզպետ Ս.Խաչատրյան

2009 թվականին ուսումնասիրվեցին նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի որոշ տարածքային բաժինների աշխատողների աշխատանքային պայմանները: Պայմանների ուսումնասիրման արդյունքում հայտնաբերված թերությունները վերացնելու նպատակով ՃՀՄ-ն մի քանի անգամ դիմեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետին: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի պատասխանը բերվում է ստորև:

Հարգելի տիկին Հակոբովա

Ի պատասխան Ձեր 28.09.2009թ. թիվ 87-01 և 17.12.2010թ. թիվ 104-01 գրությունների՝ Ձեզ եմ ուղարկում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պատասխանը՝ ծառայության տարածքային բաժինների շենքային պայմանների բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքի մասին:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքներով՝ Չ.Մարգարյան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Մ.Մնացականյանին
Հարգարժան պարոն նախարար

Հայտնում եմ Ձեզ, որ 2009թ. ընթացքում ՀՀ պետական հիմնարկների, ՏԻՄ և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից ծառայության աշխատակազմի որոշ տարածքային բաժիններում կատարված աշխատողների աշխատանքային պայմանների ուսումնասիրությունից հետո, նրանց կողմից ներկայացված տեղեկանքում նշված տարածքային բաժիններում կատարվել են ընթացիկ նորացման աշխատանքներ, տեղադրվել են օդորակիչներ, կարգավորվել են հոսանքի լարերի և համակարգիչների միացման ուղիները:

Միաժամանակ հայտնում եմ, որ տարածքային բաժիններում 2010 թ. շարունակվելու են իրականացվել ընթացիկ վերանորոգման, շինարարական և բարեկարգման, ինչպես նաև աշխատողների աշխատանքային և առողջության համար անվնաս պայմանների ապահովմանն ուղղված աշխատանքները:

Վ.Խաչիկյան

Ա Ր Հ Մ Ի ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Ա Ռ Օ Ր Յ Ա Ն

- ✓ 2009թ. հոկտեմբերին Կապան քաղաքում ՃՀՄ-ն կազմակերպեց աշխատանքային օրենսգրքի նորմերի կիրառման և աշխատանքի անվտանգության վերաբերյալ սեմինար Կապանի տարածքի պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միության անդամ կազմակերպությունների ղեկավարների, հաշվապահների և արհմիության լիդերների համար:
- ✓ 2009թ. դեկտեմբերին ՀԱՄԿ-ի նիստերի դահլիճում կայացավ Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահության ընդլայնված նիստ, որին բացի նախագահության անդամներից ներկա էին նաև Երևան քաղաքի արհմիութենական կազմակերպությունների նախագահներ, ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ.Խարատյանը, ՀԱՄԿ-ի պատասխանատու քարտուղար, ուսումնահետազոտական կենտրոնի ղեկավար Լ.Խաչատրյանը: Բ.Խարատյանը ներկայացրեց ՀԱՄԿ-ի տեսակետը աշխատանքային օրենսգրքում կառավարության կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ: Այդ հարցի շուրջ տեղի ունեցան բուռն քննարկումներ: